

**ՀՀ Արմավիրի մարզի Լենուղի համայնքի
ղեկավարի 2014թ.-ի տարեկան
հաշվետվություն**

19.01.2015թ.

Հարգելի ընկերներ, ավագանու անդամներ և հրավիրվածներ Ձեզ են ներկայացնում Լենուղի համայնքում կատարված մեկ տարվա աշխատանքների հաշվետվությունը:

Գյուղատնտեսություն:

Լենուղի գյուղը ունի 650հա գյուղ նշնակության հողեր, որտեղ հիմնականում մշակվում են պտղատու և խաղողի տեխնիկական սորտի այգիներ: Գարնանը մաքրվել և վերանորոգվել է ներտնտեսային ոռոգման ցանցը շուրջ 35 կմ: Ստացվել է 92,0տ. ազոտական պարարտանյութ 6000դրամ մեկ պարկը և 1700,0տ. դիզ վառելիք 350դրամ լիտրը արժեքով բաշխվել է բոլոր հողագործներին:

2014թվականի գյուղատնտեսական տարում արտադրված գյուղատնտեսական մթերքները անխափան մթերվել է ՄԱՊ-ՓԲԸ, ՆՈՅԱՆ, Արմավիրի կոնյակի գործարանների կողմից:

Կրթություն և մշակույթ

Գյուղն ունի գեղեցիկ վերջերս վերանորոգված դպրոցի շենք, որտեղ սովորում է 280 աշակերտ: Դպրոցը համալրված է բարձրորակ և որակյալ մասնագետներով: Գյուղապետարանը միշտ իր աջակցությունն է ցուցաբերել դպրոցին: Դպրոցի շենքում գյուղապետարանի հովանավորության գործում է նախակրթարան իր 20 երեխաների թվաքանակով:

Անմխիթար վիճակում է գյուղի կուլտուրայի տունը, որի պատճառով ոչ մի միջոցառում չի անցկացվում կուլտուրայի տանը:

Տրանսպորտ

Գյուղը սպասարկում է երթուղային տաքսիներ, որոնք գյուղից մեկնում են յուրաքանչյուր 20 րոպեում, շրջակա գյուղերին կապում միմյանց:

Կոմունալ տնտեսություն

Յուրաքանչյուր շաբաթվա ընթացքում գյուղի շրջիկ մեքենան տեղափոխում է գյուղի աղբը 2կմ հեռավորության վրա գտնվող աղբանոց: Շատ վատ վիճակում է գտնվում խմելու ջրի ներտնտեսային ցանցը, որը կառուցվել է 1962թ.: Երեք խորքային նասոսներ աշխատելով 8-10 ժամ գյուղի վերջամասերում նույնիսկ խմելու ջուր չեն կարողանում վերցնել:

Ֆինանսներ

Եկամուտների մասով` Լենուղի համայնքի 2014թվականի վարչական բյուջեով նախատեսված 33385,4 հազար դրամից` փաստացի կատարվել է 32571,5 հազար դրամ, կատարողական %-ը 97,6 որից սեփական եկամուտներ` 15120,2 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 14306,1 հազար դրամ կատարվել է 94,6% -ով:

Պետբյուջեից ստացված դոտացիա- 18265,2 հազար դրամից մուտք է եղել 18265,2 հազար դրամ:

Ներկայացվում է սեփական եկամուտները ըստ հոդվածների`

1. Դոզի հարկ` նախատեսված 7880,0 հազ.դրամից փաստացի մուտքագրվել է 7010,8 հազ.դրամ:
2. Գույքահարկ շենք շինություն նախատեսված 280,0 հազ. դրամից փաստացի մուտքագրվել է 500,7 հազ.դրամ:
3. Ֆիզ.անձ և իրավ. անձանձ փոխադրամիջոցների գ/հարկ նախատեսված 2970,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 3616,8 հազար դրամ:
4. Վարձակալական հողերի վարձավճարից նախատեսված 2200,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 1807,0 հազ.դրամ:
5. Մատուցվող ծառ. դիմաց վճար նախատեսված 1760,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 1350,8 հազար դրամ:
6. Տեղական տուրքեր նախատեսված 30,0 հազար դրամից փաստացի մուտքագրվել է 20,0 դրամ

Ծախսեր`

Ներկայացվում է վարչական բյուջեով ֆինանսական ծախսերը ըստ հոդվածների

1. Աշխատավարձ նախատեսված 19455,4 հազար դրամից փաստացի ծախս 18956,0 հազար դրամ
2. Երիտասարդական ծախսեր նախատեսված 1400,0 հազար դրամից փաստացի ծախս 1400,0 հազար դրամ
3. Գրասենյակային ծախսեր նախատեսված 300,0 հազար դրամից փաստացի ծախս 300,0 հազար դրամ
4. Տրանսպորտային ծախսեր նախատեսված 980,0 հազար դրամ փաստացի ծախս 980,0 հազար դրամ:
5. Կապի ծախսեր նախատեսված 640,0 հազար դրամից փաստացի ծախս 606,0 հազար դրամ:

6. Զեռուցման դիմաց էլ.էներգիա ծախս՝ նախատեսված 560,0 հազար դրամից փաստացի ծախս 420,0 հազար դրամ:
7. Գործողում նախատեսված 90,0 հազար դրամից փաստացի ծախս 20,0 հազար դրամ:
8. Տեղեկատվական ծառայություն նախատեսված 120,0 հազար դրամից փաստացի ծախս 118,0 հազար դրամ:
9. Սոց օգնություն՝ նախատեսված 2020,0 հազար դրամից փաստացի ծախս 2020,0 հազար դրամ:
10. էլ.էներգիա ծախս՝ խ/ջ համար նախատեսված 5350,0 հազար դրամից փաստացի ծախս 5132,0 հազար դրամ:
11. Ընդհանուր բնույթի այլ ծախսեր՝ նախատեսված 580,0 հազար դրամից փաստացի ծախս 515,6 հազար դրամ:
12. Դրամաշնորհի տրամադրում Լենուղի համայնքի դպրոցի նախակրթարանին նախատեսված 1300,0 հազար դրամից փաստացի ծախս 1300,0 հազար դրամ:
13. Նվիրատվություն հասարակական ոչ առևտրային կազմակերպություններին նախատեսված 250,0 հազար դրամից փաստացի ծախս 240,0 հազար դրամ:
14. Շենք-շին. ընթացիք նորոգում և պահպանում նախատեսված՝ 200,0 դրամի դիմաց փաստացի 0,0 դրամ:

Ընդամենը վարչական բյուջեով նախատեսված ծախսեր 33385,4 հազար դրամի դիմաց ծախսվել է 32007,6 հազար դրամ:

2014 թվականի Լենուղի համայնքի տարեկան ֆոնդային բյուջեով նախատեսված 2207,4 հազար դրամից փաստացի ծախսվել է 2206,0 հազար դրամ՝ որը ծախսվել է Լենուղի համայնքի խ/հ պոմպերի վերանորոգման և շահագործման համար՝ 2166,0, գրքերի ձեռք բերում՝ 40,0 հազար դրամ Աշխատավարձի և եկամտային հարկի գծով պարտքեր չունենք:

Լենուղի Գյուղի հիմնահարցերն են՝

1. Խմելու ջրի ներտնտեսային ցանց.
2. Կուլտուրայի տան վերանորոգում.
3. Մանկապարտեզի շենքի կապիտալ շինարարություն:

ԼԵՆՈՒՂՈՒ ԳՅՈՒՂԱՊԵՏ՝  Գ.ՂԱԶԱՐՅԱՆ

